

ՀԱՇԿԵՐՈՅԹ

Ի ՊԱՏԻԻ ՄԱՔ ԻՆՆԷՍ ԱՐՔ Ի

Լոնսոնի Ս. Սարգիս եկեղեցւոյ երանա-
կալութեան, Համայնական եւրոպայի եւ
Բարեգործականի վարչութեանց կողմէ Օ
գոստոսի 13ին, 1958, Քենդինկըրրն Փալատ
Հօթելին մէջ նաեկերոյ մը տնօրէն է ի պա-
սիւ երուսաղէմի Անկլիկան Արքեպիսկոպոս
Մաք Իննէսի եւ իր Տիկնոջ:

Ճաշկերոյի ներկայ եղած են Անկլիկան
եկեղեցիի ներկայացուցիչներ եւ Լոնսոնի
մեր ազգայիններէն շատեր:

Ճաշկերոյի առաջին խօսուողը եղած է
Անկլիկոյ Հայոց Կաթողիկոսական Պատուի-
րակ Տ. Պատկ Եղա. Թումայեան, որ ջատա-
գովականը բրած է Անկլիկան եւ Հայ եկե-
ղեցիներու սիրալիր յարաբերութեանց եւ իր
խօսքին վերջաւորութեան անգրադարձած Տ.
Տիրան Արքեպ. ի անձին եւ գործունեու-
թեան մասին, բաւելով Իբրաքան Հօր անա-
բնութիւններն ու կորովի եւ շինարար գոր-
ծունեութիւնը, որուն ներկաները իրենց
համամտութիւնն ու համակրութիւնը յայտ-
նած են իրենց ծախանարութիւններով:

Տ. Պատկ Եղա. եւս խօսք առած է օր-
ուան պատուոյ հիւրը՝ Մաք Իննէս Արքեպիս-
կոպոս: Իր շնորհակալական խօսքերէն եւս,
ան երկարօրէն անգրադարձած է եւ ծան-
րացած քննաներապէս Հայոց եկեղեցւոյ եւ
Անկլիկան եկեղեցիներու միջեւ տեղի ունե-
ցող բաւեւ փոխ-յարաբերութեանց մասին՝
ի մասնաւորի երուսաղէմի մէջ: Մաք Իննէս
Արքեպ. իր խօսքի աւարտին յայտնած է իր
անկեղծ եւ արտաբերական համակրութիւնը Տ.
Տիրան Արքեպիսկոպոսի անձին եւ գործու-
նեութեան հանդէպ:

Փառաւոր հիւրասիրութենէ մը եւս, ներ-
կաները այդ ջերմ մրնոյրտեն մեկնած են
հոգեկան մեծ գոհունակութեամբ:



Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Երուսաղէմ, 26 Սեպտ. 1958

Նորին Վեհ. Հիւսէյն Թագաւոր

Ամման

Յանուն իմ, Ս. Յակոբեանց Միաբա-
նութեան եւ Յարգանքով հայ համայնքին,
կուգամ Ձեր Վեհախառնութեան ներկայացնել
ջերմագին շնորհաւորութիւններ՝ Մարգարէի
ծննդեան տօնին առիթով, վերանորոգելով
մեր հաւատարմութիւնը Հաշիմական Դանիւն:

ՍՈՒՐԷՆ ԵՊՍ. ՔԷՄԼԱՃԵԱՆ

Ընդհ. վարիչ Գործոց Ս. Արքաւոյ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Եր. 30 Օգոստոս, Շաղակար Ս. Էջմիածնի
տօնին առթիւ, Նախատեսակը եւ օրուան Ս. Պա-
տարագը տեղի ունեցան Մայր Տաճարին կից՝ Ս.
Էջմիածնի եկեղեցիին մէջ:

— Վերափոխման Նախարարի առթիւ, Կ. վ.
տեղի ունեցաւ «Հրաշափառ»-ով մուտք Գեթսե-
մանի Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշար-
ւեցան ժամերգութիւնն ու Նախատեսակը՝ Գեր. Տ.
Շնորհք եպս. Կ. Նախագահութեամբ:

— Իրիկեացիներ, շահուած Նախարարութիւնը,
որ ուրիշ տարիներ կը կատարուէր Նոյն եկեղեց-
ւոյ մէջ, օրուան մէջ պատահած ջնջիչ դէպքին
հետեւնքով (տես Պաշտօնական Հաղորդագրու-
թիւնը) տեղի ունեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տա-
ճարին մէջ:

● 31 Օգոստոս, Կիրակի, Վերափոխման տօնին
առթիւ, ամբողջ Միաբանութիւնը ինքնաշարժե-
րով մեկնեցաւ Գեթսեմանի Ս. Աստուածածնայ
եկեղեցիին, ուր «Հրաշափառ»-ով հանդիսաւոր
մուտքէն ետք, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ
հանդիսաւորապէս Ս. Պատարագ մատուց Գեր. Տ.
Շնորհք եպս. Գաղուստեան, և քարոզեց յետ ընդ
քո իսկ անձն անցցէ սուր...» (Դուհ., Բ., 35)
ընարանով:

— Գեր. Սրբազանը Նախագահեց Նախ կէսօրէ
վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Անդա-
տանին» և Նախատեսակին:

— Այս իրիկունէն սկսեալ, Աստուածածնայ
Գ-օրեայ տօներու ամբողջ ընթացքին, Մայր Տա-
ճարին մէջ կատարուեցաւ «Եկեղեցի» յատուկ
ժամերգութիւն: Սոյն «Հսկումները» շարունակ-
ուեցան Գ օրերէն վերջ շարաթը մէկ անգամ,
ամէն Հինգշաբթի:

● Կիր. 7 Սեպտ. ին, ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնատան երաշխատոր Ս. Աստուածածին մատրան մէջ:

● Գշ. 9 Սեպտ., Ս. Յովակիմայ եւ Աննայի տօնին առթիւ, Ս. Աստուածածնայ Տաճարի Հայր Եղիշի վերեւմասին վրայ մատուցուեցաւ Ս. Պատարագ. ըստ սովորութեան, օրուան պատարագին էր Տաճարին Տեսուչը՝ Հոգ. Տ. Հայկասեր վրդ. Պայրաւեան, որ խօսեցաւ նաեւ աւուր պատշաճի քարոզ մը:

● 14 Սեպտ., Կիրակի, Ս. Աստուածածնայ Կիւս Դօստլ տօնին առթիւ, Միաբան Հայրեր, Գեր. Տ. Ենորճ Եպս. ի գլխաւորութեամբ, իջան Գեթեմանի ձորը, ուր Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Կերեզմանին վրայ մատուցուեցաւ Ս. Պատարագը. Գարոզեց Հոգ. Տ. Թորոս վրդ. Մանուկեան, քնարան ունենալով Ձեր զօտիները ամրացուցէք: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ նոր նկարներու օժուժը, ձեռամբ Գեր. Տ. Ենորճ Եպս. ի:

● Կիր. 21 Սեպտ. — Ծնունդ Ս. Աստուածածին: Այս առաւօտ, Գեր. Տ. Նորայր Եպս. Պապարեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը մեկնեցաւ Գեթեմանի ձորը, ու «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ տաճար, ուր Գեր. Ս. Սարգսյանը մատոյց օրուան հանդիսատէր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Կերեզմանին վրայ և քարոզեց, շնչտելով խնարհութեան դերը մեր անասական թէ ընկերային կեանքին մէջ: Ու ցոյց տուաւ Ս. Կոյսը իրեն տրուած խնարհութեան, որուն շնորհիւ ան արժանացաւ Քրիստոսի մայրը ըլլալու և երկինք վերափոխուելու գերազանց փառքերուն:

● 27 Սեպտ. Եարթ կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Խաչվերացի մեծահանգէս նախատեսակը, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի, որ ապա Ս. Խաչափայտի մատուցը Ս. Գլխաւորի մատուցէն հանդիսաւորապէս փոխադրեց Աւագ Սեպտ.:

— Իրկնադէմին, Գեր. Սրբազանը նախագահեց նաեւ Մայր Տաճարին մէջ պաշտուած Հսկման արարածութեան:

● Յաջորդ օր, Մայր Տաճարին մէջ հանդիսատէր Ս. Պատարագը մատոյց և քարոզեց Գեր. Տ. Ենորճ Եպս. ի, «Ջօրութիւն Ս. Խաչի քօ Քրիստոս...» քնարանով, բացատրելով թէ աշխարհիկ բանականութիւն, ինչպէս նաեւ Քրիստոսի բանականութիւնը երեք դասակարգի գիտութիւններ կան միշտ, դասաւորելիք, զաւանանք և հաստատարիմներ: Ըլլալու համար սակայն այս վերջիններէն, հարկ է ունենալ հաւատք, քաջութիւն և համբերութիւն: Քարոզէն ետք, Գեր. Տ. Սուրէն Եպս. ի նախագահութեամբ, կատարուեցաւ տարեկան հոգեհանգստեան հանդիսատէր կարգը՝ Ս. Ամբոստ և ազգիս բարեբարներ կարապետ և Գրիգոր Մկրտնեան եղբարց հոգիներուն համար:

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Խաչվերացի մեծահանգէս «Անդատան»-ը, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմ-

հանեանի, և ի ներկայութեան ժողովուրդի հոծ թաղութեան:

● Եր. 4 Հոկտ. ին, ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Մայր Տաճարի Ս. Նշան վերնամատրան մէջ:

● Կիր. 5 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան, մեր վերնամատրան մէջ Պատարագի և իր վրդ. աղան աղբարիկ քարոզը խօսեցաւ Հոգ. Տ. Ներսէս վրդ. Բապոնեան, նշելով ունենալով եկեղեցին, ու ծանրանալով անոր հիմնադրութեան ու նպատակին շուրջ:

● 10 Հոկտ. Սրբաթ կէսօրէ վերջ, Ս. Կեօրգայ տօնին նախատեսակը կատարուեցաւ, ըստ սովորութեան, Ս. Քաղաքիս Ղպտոց Ս. Կեօրգ եկեղեցւոյ մէջ, Գեր. Տ. Ենորճ Եպս. ի հանդիսաւորութեամբ:

● Յաջորդ առաւօտ, ժամերգութեան մէջ մտքը, Մանկավանդ սեփեալ, կատարուեցաւ Մայր Տաճարի ներքին դռնին մէջ՝ Ս. Կեօրգայ տեղանին առջև: Ապա, Միաբանութիւնը, Գեր. Տ. Նորայր Եպս. ի գլխաւորութեամբ, մեկնեցաւ Ղպտոց Ս. Կեօրգայ վանքը, ուր Ս. Պատարագը մատոյց և քարոզեց Հոգ. Տ. Կորիւն վրդ. Մանուէրեան, քնարան ունենալով օրուան ձաշու Աւետարանէն Ձի ամենայն որ խոստովանեցի յիս առաջի մարդկան, և Որդի Մարդոյ խոստովանեցի զնմանէ առաջի հրեշտակայ Աստուծոյ: Եւ որ ուրաքի գլխաւորութեամբ (Ղկոյս, ԺԲ, 8-9), յայտնելով թէ քրիստոնէութիւնը քնարան հեղութեան, խնարհութեան և խաղաղութեան, նոյնքան և աւելի համարձակութեան ու շարին զէմ ծառանալու, անոր մեքենայութիւններուն զէմ պայքարելու արիւթութեան կրօնքն է: Ու ցոյց տուաւ Ս. Կեօրգը իրեն տրուած այս վերջիններէն: Ս. Պատարագէն ետք, Միաբանութիւնը պատուասիրուեցաւ Ղպտոց Հոգ. Տեղին:

— Նոյն օրը կէսօրէ վերջ, վաղուան վարագայ Ս. Խաչի տօնին առթիւ, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ու պաշտուեցան երեկոյան ժամերգութիւնն ու նախատեսակը՝ մեր Բ. Գողգոթայի վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսատէր թափօր Տաճարէն ներս Թափօրապետէն էր Գեր. Տ. Ենորճ Եպս. Գալուստեան:

● Յաջորդ օր, 12 Հոկտ. Կիրակի, գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ: Ապա, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան մատոյց օրուան հանդիսատէր Ս. Պատարագը՝ Քրիստոսի Ս. Կերեզմանին վրայ և քարոզեց, պատմականը ընելով Հայց. եկեղեցւոյ տնախմբած խաչի չորս տօններուն, ու ծանրանալով վարագայ Խաչի խորհուրդին շուրջ: Յետ քարոզի, կատարուեցաւ «Հայրապետական մաղթանք», Ն. Ս. Օմեթիւն Տ. Տ. Վաղդէն Ա. Ամենայն Հայոց պաթարկոսի օժման Յրդ և ծննդեան 50րդ տարեդարձութեան առթիւ, որուն ընթացքին զուարթօրէն կը նշէին Ս. Յարութեան Տաճարին հայկական դանգերը:

● 18 Հոկտ. — Ս. Դեորգյայ տունին յաջորդ Շր. օրը, ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ներքին դահլիճը՝ Ս. Դեորգյայ սեղանին վրայ։

● 19 Հոկտ.՝ Կիրակին, ի Ս. Զակոր մատուցուած Ս. Պատարագի ընթացքին, Հոգ. Տ. Վազգէն Վրդ. Դրպրըսիան խօսեցաւ իր վարդապետական անդրանիկ քարոզը, բնաբան ունենալով օրոշան ծառն ընթերցուածէն «Փորձեցէք դանձրնս ձեր, եթէ կայցէ՞ք ի նոյն հաւատս» (Բ. Կորնթ., ԺԳ., 5)։

● Ուր. 24 Հոկտ. — Զորդանանի բարեխնամ Կառավարութեան հրահանգին համաձայն, առաւօտեան ժամը 10ին, Ս. Զակորեանց Մայր Տաճարին մէջ, ի ներկայութեան Ս. Թ. Վարժարանի երկսեռ աշակերտութեան և ժողովուրդի բազմութեան, կատարուեցաւ Գոհարանական Մաղթանք՝ Սիւսեան Սեպարեան Կաթողիկոսութեան (ՄԱԿ) հիմնարկութեան 13րդ տարեկարծի առթիւ։ Արարողութեանց կը նախագահէր Գեր. Տ. Սուրէն Եպս.։ Գեր. Տ. Շնորհք Եպս. խօսեցաւ սոյն կաթողիկոսութեան ունեցած մարդկօգուտ գործունէութեան շուրջ, զորաւորելով աշխարհի խաղաղութեան համար անոր տարած ջանքերը։

— Նոյն օրը կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Թարգմանչաց հանդիսաւոր նախատօնակը՝ նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Բէմհանեանի։

● Շր. 25 Հոկտ. — Ս. Թարգմանչաց վարդապետացն մեռց։ Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ։ Պատարագին էր, ըստ ընկալեալ սովորութեան, Կիւլպէնկեան Մատենադարանի Տեսուչը՝ Հոգ. Տ. Դաւիթ Արդ. Սահակեան, Քարոզեց Գեր. Տ. Շնորհք Եպս., ծանրանալով Թարգմանիչ վարդապետներու կատարած գործերու շարժառիթներուն վրայ, և յետ քարոզի նախագահեց Ս. Աթոռոյ և ազգիս մեծ անուն բարերար Գալուստ Կիւլպէնկեանի, ինչպէս նաեւ իր տիկնոջ և ծնողաց հոգիներուն համար կատարուած տարեկան հոգեհանգստեան հանդիսաւոր կարգին։

● Կիր. 26 Հոկտ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ։ Պատարագեց Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. և քարոզեց Գեր. Տ. Շնորհք Եպս., մեկնաբանելով օրոշան ծառն Աւետարանին ընթերցուածը (Մարկ., ԺԲ., 35-44)։

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Դշ. 2 և Եշ. 4 Սեպտ. — Գեր. Տ. Սուրէն Եպս., հետն ունենալով Հոգ. Տ. Վազգէն Վրդ. և մեկնեցաւ Ամման պատկան իշխանութեանց մօտ, վանական խղիւրներու կարգադրման գործով։

● Դշ. 2 Սեպտ. — Պատարագարանս այցելեց քաղաքիս Անկիլթան Արքեպս. Գեր. Տ. Սաքինէն, զոր ընդունեց Գեր. Տ. Շնորհք Եպս.։ Արքեպիսկոպոսը նոր վերադարձած էր Լոնտոնէն, ուր մասնակցած էր Լամբեթի ժողովին։

— Նոյն օր ստորագրուեցաւ Ս. Յարութեան Տաճարի հարաւային թիւի նորոգութեան համաձայնագիրը, պատրաստուած՝ երեք իրաւակից Պատրիարքութեանց ներկայացուցիչներու կողմէ։ Յանուն Ս. Աթոռոյ ստորագրեց Լուսարարապետ Գեր. Տ. Շնորհք Եպս.։

● Բշ. 8 Սեպտ. — Երուսաղէմի Քաղաքապետ Վսեմ. Ռուհի Էլ-Խաթիպ այցելեց Պատրիարքարան, և շուրջ կէս ժամ սիրալիր զրոյց ունեցաւ Գեր. Տ. Սուրէն և Տ. Շնորհք Արքեպիսկոպոսներու հետ։

● Դշ. 9 Սեպտ. — Գեր. Տ. Սուրէն և Տ. Շնորհք Եպս. ներ, իրենց հետ ունենալով Հոգ. Տ. Վազգէն և Բեթղեհէմի Տեսուչ Տ. Մամբրէ վարդապետները, այցելեցին Կառավարչատուն և շնորհաւորեցին Ս. Քաղաքիս նոր Միւթաստըր՝ Համտի Պէյ Խալաֆ, որ Բեթղեհէմի Գալմազմութեան սոյն պաշտօնին բարձրացած էր։

● Եշ. 11 Սեպտ. — Լատինաց Պատրիարքարանի Դիւանապետ բարեխնամ այցելութիւն մը տուաւ Պատրիարքարանս և ընդունուեցաւ Գեր. Տ. Սուրէն Եպս. ի կողմէ։

● Շր. 13 Սեպտ. — Կ. ա. ժամը 10.30ին, Երուսաղէմի Վսեմ. Կառավարչի տուած ժամագրութեան համաձայն, Ս. Աթոռոյ Գործոց Ընդհ. Վարիչ Գեր. Տ. Սուրէն Եպս. Բէմհանեան, ընկերակցութեամբ Դիւանապետ Հոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեանի և Աւագ Թարգման Հոգ. Տ. Վազգէն Վրդ. Դրպրըսիանի, ներկայացաւ Վսեմ. Կառավարչին և անոր հետ ունեցաւ երկու ժամ տեղ տեսակցութիւն մը վանքի վերջին խղիւրներու շուրջ։

● Բշ. 15 Սեպտ. — Երուսաղէմի Վսեմ. Կառավարիչ Հասան Էլ-Քէթիպ, իր թիւ ՄԱՍ 24/52 և 15 Սեպտ. 1958 թուակիր նամակով, Ն. Վսեմ. ներքին Գործոց Նախարարի հրահանգին համաձայն, տեղեկացուց Կառավարութեան որոշումը Եղիշէ Եպս. Տէրտէրեանի Երուսաղէմ մուտքի անկարելիութեան մասին։

● Եշ. 18 Սեպտ. — Նախապէս առնուած ժամագրութեան համաձայն, Գեր. Տ. Սուրէն Եպս., ընկերակցութեամբ Հոգ. Տ. Տ. Թորգոմ և Վազգէն վարդապետներու, տեսակցութիւն մը ունեցաւ Ն. Վ. Երուսաղէմի Կառավարչին հետ՝ վանքի վերաբերեալ հարցերու շուրջ։

● Բշ. 22 Սեպտ. — Առաւօտուն, յանուն Ս. Աթոռոյ Միաբանութեան, Աւագ Թարգման Հոգ. Տ. Վազգէն Վրդ. Արքեպիսի Պալատ գնաց և յանձնեց Ն. Վեհ. Հրեշտայն Թագաւորին ուղղուած աղերսագիր մը՝ Ս. Աթոռոյ ղեկավարուն, ինչպէս նաեւ Տ. Տիրան Արքեպս. ի արտաքսման շուրջ։

● Դշ. 24 Սեպտ. — Հանրօգուտ Շինութեանց Նախարար Ն. Վ. Սալիմ Էլ-Պախիթի անակնկալ անհանգստութեան առթիւ, յանուն Ս. Աթոռոյ Միաբանութեան, Գեր. Տ. Սուրէն Եպս. հեռագիր մը յղեց Նորին Վսեմութեան, շուտափոյթ ապաքինում մաղթելով։

● Ուր. 26 Սեպտ. — Առաւօտեան ժամը 9.30ին, իսլամաց Մարգարէի ծննդեան տօնին առթիւ, Գեր. Տ. Սուրէն Եպս., ընկերակցու-

թեամբ Հոգ. Տ. Տ. Անուշաւան և Վաղգէն վարդապետներու և Ամմանի Տեղական Խորհուրդի անդամներ՝ Տիարք Յակոբ Պէրպէրեանի, Պետրոս Տաւադանեանի և Բիւզանդ Զօրպանեանի, ներկայացաւ Արքեպիսկոպոս և ստորագրեց այցելութեան մասնաւոր տոմարին մէջ:

● Կիր. 28 Սեպտ. — Ս. Երկիրը ընթացող Անկիւքան եկեղեցւոյ պատգամաւորութիւն մը այցելեց Պատրիարքարան և ընդունուեցաւ Գեր. Տ. Ենթրէք Եպս. Ի կողմէ:

● Բշ. 29 Սեպտ. — Երեկոյեան, Ս. Ս. Խաթիս Միարաններէն Գեր. Տ. Հմայեակ Թ. Վրդ. Ինչոյեան, որ մէկ ու կէս տարիէ ի վեր կը գտնուէր Միացեալ Նահանգներ իբրի Նուիրակ Ս. Աթոռոյ ժամանակ Ս. Աթոռ և մեկնուեցաւ Հոկտ. 17ին:

● Դշ. 30 Սեպտ. — Կ. ա. ժամը 11ին, Համալսարանային եկեղեցական Խորհուրդի Աւագ Ներկայացուցիչ Օր. Ռոսթ Պէք այցելեց Պատրիարքարան, ուր տեսակցութիւն մը ունեցաւ Գեր. Տ. Ս. Սուրէն և Ենթրէք Արքեպիսկոպոսներէն, Գաղթականաց հարցի կապակցութեամբ: Օր. Պէքին յանձնուեցաւ յաւաքիր մը մեր գաղթականաց կացութեան մասին:

● Դշ. 1 Հոկտ. — Առաւօտեան ժամը 8ին, Գեր. Տ. Սուրէն Եպս. Ի գլուխ Միարանութեան, կատարեց քացումը Ժառ. Վարժ. և Բնծայարանի և ապա Ս. Թարգմանչաց Վարժարանի 1958-59 դպրոցական տարեջրմանին:

● Կիր. 5 Հոկտ. — Առաւօտեան ժամը 10ին, Քաղաքիս Ոստիկանատան մէջ տեղի ունեցաւ վանքի աւագ զբան զոնապան Ղազարոս Քիւշտիւրեանի և գաղթականաց փառապան Յակոբ Մէնէշեանի զատուվարութիւնը, որոնք բանտարկուած էին Օգոստոս 30ի վանքէն ներս պատահած զէպքերու ընթացքին:

● Դշ. 8 Հոկտ. — Կէսօրէ առաջ ժամը 11ին, երեսուզէմի նորընտիր Միւթասարքի Համտի Խալաֆ, փոխադարձ այցելութիւն տուաւ Պատրիարքարան և ընդունուեցաւ Գեր. Տ. Սուրէն Եպս. Ի կողմէ:

● Ուր. 10 Հոկտ. — Պիոս ԺԲ. Պապի մահուան առթիւ, Գեր. Տ. Սուրէն Եպս. Ի հետեւունեալով Հոգ. Տ. Վաղգէն Վրդ. և Տիար Կարպիս Հինդիւնը, ցաւակցութեան զնայ Լատինայ Ամեն. Ս. Պատրիարքին, Պապական Նուիրակին և Ֆրանչիսկեանց Գեր. Կիւսթոտին:

● Եր. 11 Հոկտ. — Առաւօտեան ժամը 9ին, ընդառաջելով Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքի հրահրին, Ս. Յարութեան Տաճարին մէջ, Պիոս ԺԲ. Պապի հոգւոյն կատարուած հանգստեան պաշտամունքին, յանուն Պատրիարքարանիս, ներկայ գտնուեցաւ Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիէան, ընկերակցութեամբ Հոգ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուրի և Տիար Կարպիս Հինդիւնի:

● Բշ. 13 Հոկտ. — Գեր. Տ. Սուրէն և Տ. Ենթրէք Եպիսկոպոսներ, Տ. Հմայեակ Թ. Վրդ. և Տ. Վաղգէն Վրդ. Ամման գալին վանական գործերով և նոյն օր վերադարձան:

● Դշ. 14 Հոկտ. — Չեռնարկուեցաւ Ս. Յարութեան Տաճարի նորոգութեան աշխատանքն:

րուն, որուն կ'անդրադառնաւ քաւելի հանգամանորէն յառաջիկային:

● Եշ. 16 Հոկտ. — Իրիկուան ժամը 6ին, Ամպասատոր պանդոկին մէջ, Տիար Ճօրճ Կարպետեանի (Ներկայացուցիչ Միացեալ Նահանգաց Զրօսաշրջիկներու Գրասենեակին) կողմէ, ի պատիւ Միացեալ Նահանգներէն եկող խումբ մը զրօսաշրջիկներու գրասենեակներու ներկայացուցիչներուն տրուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Սուրէն Եպս., Հոգ. Տ. Թարգմ Վրդ. և Տիար Կարպիս Հինդիւն:

● Եր. 18 Հոկտ. — Կէսօրէ առաջ, Պատրիարքարան այցելեց Լատինի Զրչ Թայմզի խմբագրապետներէն, որուն կ'ընկերակար երեսուզէմի Անկիւքան եկեղեցւոյ Երէջ Հայր Էվրբի: — Նոյն օր ստորագրուեցաւ Յունաց և մեր Պատրիարքարաններու համաձայնագիրը՝ Ս. Աստուածածնայ Տաճար վերատին հեղեղութեւ փառքէն ապահովելու միջոցառումներու մասին: Այս մասին ևս քաւելի հանգամանորէն՝ յառաջիկային: Պատրիարքարանիս կողմէ համաձայնագիրը ստորագրեց Լուսարարապետ Գերապատիւ Տ. Ենթրէք Եպս. Ի Գործի սկսուած է արդէն:

● Կիր. 19 Հոկտ. — Կէսօրէ առաջ, Քաղաքիս Յոյն Կաթոլիկ Պատրիարքարանին մէջ, Պիոս ԺԲ. Պապի հոգւոյն կատարուած հանգստեան պաշտաման ներկայ եղան Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիէան և Հոգ. Տ. Ներսէս Վրդ. Բապուճեան:

● Բշ. 20 Հոկտ. — Կէսօրէ առաջ, Քաղաքիս Միւթասարքի գրասենեակին մէջ, միւս յարան. ուանութեանց ներկայացուցիչներու հետ խորհրդակցական ժողով մը տեղի ունեցաւ Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (ՄԱԿ) Հիմնարկութեան 13րդ տարեկարծի տօնախմբութիւնը կատարելու շուրջ: Պատրիարքարանիս կողմէ ներկայ էին Հոգ. Տ. Թարգմ Վրդ. Մանուկեան և Տիար Կարպիս Հինդիւն:

— Նոյն ժամուն, Հին Քաղաքի Ոստիկանապետ Սատրղ Էֆ. Նաղիֆ ներկայացաւ Գեր. Տ. Սուրէն Եպս. Ի, վանքի վերաբերեալ կարգապահական և այլ խնդիրներու առնչութեամբ:

● Ուր. 24 Հոկտ. — ՄԱԿի Հիմնարկութեան 13րդ տարեկարծի առթիւ, յանուն Ս. Աթոռոյ Միարանութեան և Յորդանանի հայ համայնքին, շնորհաւորական հեռագիր զրկուեցաւ ՄԱԿի Ընդհանուր Քարտուղարութեան:

— Այս ուրախ առթիւ, երկու օրեր, վանքի աւագ դռնը զրօշապարդուած էր և ելիքտրական լոյսեր ազուցուած:

— Նոյն առթիւ, զոյգ վարժարաններու մէջ խօսակցաւ սոյն կազմակերպութեան կատարած գործունէութեան շուրջ:

● Բշ. 27 Հոկտ. — Ասորոց Անտիօքի և Միւլիս Արեւելի Պատրիարք Մար Իգնատիոս Ժաղօպ Գ. Ի Գահակալութեան առաջին տարեկարծի առթիւ, Ասորոց վանքի Տեսուչ Հայր Պուլուս Ժէլէֆի կողմէ սարքուած թէյասեղանին ներկայ գտնուեցան Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուկեան և Հոգ. Տ. Վաղգէն Վրդ. Գրգորիւսեան: